

371.1

7-24

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ


ԼԻԲԱՆԱՆԻ

1930

ՏԳ. «ՀՐԱԶԴԱՆ»

ՊԵՂՈՒՔ

1930



371.1
Z-24

3 JUN 1930

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ՌԻՍՈՒՑԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԼԻԲԱՆԱՆԻ

1930

ՊՏ. «ՀՐԱԶԴԱՆ»

ՊԵՐՈՒԹ

1930



ՀԱՅ ՌԻՍՈՒՑԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

03 JUN 2013

47.207

ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ

Ն Պ Ա Տ Ա Կ

Յօդ. 1. — Լիբանանի հայ երկսեռ Ուսուցչական միութեան նպատակն է բարձրացնել հայ կրթական մշակներուն մտաւոր, բարոյական և տնտեսական վիճակը:

Այս նպատակին հասնելու համար տեղի պիտի ունենան.

Յօդ. 2. — ա) Կանոնաւոր պարբերական հաւաքումներ, բ. վիճաբանական մանկավարժական ժողովներ, գ.) քննական դասախօսութիւններ և տիպար դասեր, դ.) քննական և ուսումնասիրական պտոյտներ, ե.) ամառնային մանկավարժական դասընթացքներ:

Յօդ. 3. — Ոյժ պիտի տրուի ուսուցիչներու մասնագիտական պատրաստութեան, ա.) հաստատելով դրադարաններ և ընթերցարաններ, բ.) կազմելով ցուցակագրութիւններ հայ և օտար մանկավարժական հոգեբանական գրքերու և պարբերականներու, գ.) հաստատելով յարաբերութիւն օտարազգի ուսուցչ. միութիւններու հետ:

Յօդ. 4. — Միութիւնը պիտի ունենայ մանկավարժական ուղղութեամբ թերթ մը աշակերտներու համար: Պիտի տպագրել տալ հանրամատչելի մանկավարժական, հոգեբանական գրքեր ու դասագրքեր, թէ՛



63493-67

ինքնագիր և թէ՛ թարգմանածոյ:

Յօդ. 5. — Պիտի աշխատի հաստատել երկրորդական վարժարաններու մէջ մանկավարժական լրացուցիչ դասընթացներ, փափաքողներու համար:

Յօդ. 6. — Պիտի աշխատի ուսուցչական ժողովներու, մամուլի և այլ օրինաւոր միջոցներով պէտք եղած թելադրութիւնները ընել ազգային մարմիններու, որպէսզի դպրոցներու կազմը, մատակարարութիւնը և ծրագիրը ենթարկուին հիմնական բարեփոխութիւններու, արդի մանկավարժական պահանջներու համաձայն:

Յօդ. 7. — Այն վարժարաններու մէջ ուր կը գործածուի Աւսումն. կորհուրդներու ծրագիրը, հոգաբարձութեանց դերը կը սահմանափակուի մի միայն տնտեսական մատակարարութեամբ:

Յօդ. 8. — Պիտի կազմակերպէ ուսուցչական և ծնողական խառն ժողովներ. կրթական խնդիրներու չուրջ:

Յօդ. 9. — Պիտի հիմնէ դպրոցական թանգարաններ և գրադարաններ:

ՀԱՍԱՐԱԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յօդ. 10. — Միութիւնը պիտի ջանայ ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ արթնցնել կրթութեան և լուսաւորութեան պահանջը և հետաքրքրութիւն առաջ բերել դէպի կրթական գործը: Առոր համար պիտի կազմակերպէ ծնողական ժողովներ, հանրամատչելի դասախօսութիւններ, դպրոցական հանգէսներ, ցերեկոյթներ, երեկոյթներ և ինչ:

ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Յօդ. 11. — Պիտի բարեկաւէ կրթական պաշտօնեաներու տնտեսական-ընկերային վիճակը, պաշտպանելով անոնց շահերը:

Յօդ. 12. — Պիտի հաստատէ օգնութեան և հանգրատեան թոշակի սնտուկ:

Յօդ. 13. — Կարօտ ուսուցիչ անդամներու կը յատկացուի հասոյթներու հարկերին 25ը:

Ծանօթ. Կարօտ կը նկատուին պաշտօնավարութեան ընթացքին աղէտի, հիւանդութեան և անիրաւ զրկանքի ենթարկուած և անիրաւօրէն չվարձատրուող ուսուցիչներ:

Յօդ. 14. — Պիտի ընձեռէ դիւրութիւններ ձեռք բերելու համար զեղչեալ գներով դեղօրայք, և դարմանում:

Յօդ. 15. — Պիտի դիւրութիւններ տայ իր անդամներուն պաշտօն ճարելու և պիտի հայթայթէ ուսուցիչ՝ դպրոցներու համար:

Յօդ. 16. — Միութեան կրնան անդամակցիլ երկսեռ այն ուսուցիչները որոնք ներկայիս պաշտօնի վրայ են Լիբանոնի հայ և օտար վարժարաններու մէջ: Նոր անդամակցիլ ուզողներ պէտք է ունենան երկրորդական կրթութիւն և ստանան վարչութեան հաւանութիւնը:

Յօդ. 17. — Անդամակցութենէ կը հեռացուին անոնք, որ կը գտնուին միութիւնը վարկաբեկող արարքներու մէջ, ինչպէս գողութիւն քրէական յանցան և ինչ:

Յօդ. 18.— Բացակայ անդամ մը չի կրնար իր ձայնը ուրիշի մը փոխանցել:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Միութեան Կազմը

Միութիւնը ունի հետեւեալ կազմը՝ Անդամներ, Կեդրոնական վարչութիւն և Ընդհանուր ժողով:

ԱՆԴԱՄՆԵՐ

Յօդ. 19.— Անդամները կրնան բլլալ պատուակալ և գործօն:

Յօդ. 20.— Պատուակալ անդամները կ'ընտրուին ընդհանուր ժողովի ձայներու երրորդի մեծամասնութեամբ, մանկավարժական և դպրոցական գործին մեծ ծառայութիւն մատուցած ազգայիններէ:

Յօդ. 21.— Պատուակալ են անոնք որ Ա. առնուազըն միանուազ 20 Ս. ոսկի կը նուիրեն և ընդհ. ժողովի $\frac{1}{4}$ ին ձայնի հաւանութեան կ'արժանանան: Բ. 15 տարի ուսուցչական պաշտօն վարած են և Գ. օգտակար դասագիրք և մանկավարժական երկասիրութիւն պատրաստած են:

ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յօդ. 22.— Միութեան կրնան անդամակցիլ այս ժրագիր կանոնագիրը ընդունող բոլոր երկսեռ ուսուցիչները առանց յարանուանական խտրութեան:

Յօդ. 23.— Անդամակցելու համար պէտք է ըս-

տանալ մասնաճիւղի վարչութեան հաճութիւնը:

Յօդ. 24.— Վարչութեանէն մերժուողները կրնան դիմել մասնաճիւղի ընդհ. ժողովին:

Յօդ. 25.— Անդամակցութենէն կրնան դադրիլ Ա. կամովին, Բ. մասնաճիւղի անդամներու երկու երկրորդի պատճառաբանուած վճիռով, Գ. ոչ արդարացուցիչ պատճառներով երեք ամիս անդամավճար չտալու պարագային:

Յօդ. 26.— Անդամակցութենէ դադրողը ուէ դրամական պահանջ ընելու իրաւունք չունի:

Յօդ. 27.— Միայն գործօն անդամները կրնան ըլլալ ընտրող և ընտրելի:

ՄԱՍՆԱՃԻՒՂ

Յօդ. 28.— Մասնաճիւղ մը կրնայ կազմուիլ երբ անդամակցողներու թիւը հինգ է:

Յօդ. 29.— Մասնաճիւղի կազմութիւնը անհրաժեշտ է հաղորդել կեդրոնական վարչութեան և ստանալ անոր համամտութիւնը:

Յօդ. 30.— Մասնաճիւղերու վարչութիւնները կ'ընտրուին տարին անդամ մը և կը բաղկանան երեքէն հինգ անդամներէ (7-9 Պէյրութի համար):

Յօդ. 31.— Մասնաճիւղերը իրենց եկամուտի հարիւրին 25ը պարտին կեդրոնական վարչութեան յանձնել:

Յօդ. 32.— Քաղաքի մը մէջ մէկ մասնաճիւղ կրնայ ըլլալ:

Յօդ. 33.— Ամէն մէկ մասնաճիւղ պիտի ունե-

նայ իր վարչութիւնը և ընդհ. ժողովը:

ՄԱՍՆԱՃԻԼՂԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐՆ ԵՆ

Յօդ. 34.— Մասնաճիւղերու դրամներու և գոյքերու պահպանումն ու կարգադրութիւնը:

Յօդ. 35.— Ներկայացնել իրենց տարեկան բոլոր գործառնութեանց համարատուութիւնը մասնաճիւղի ընդհ. ժողովին և ղրկել կեդրոնական վարչութեան:

Յօդ. 36.— Կազմել տարեկան նախահաշիւ, ու ներկայացնել ժողովին քննութեան և վաւերացման:

Յօդ. 37.— Գործադրել մասնաճիւղի որոշումները ու կեդրոնական վարչութեան յանձնարարութիւնները:

Յօդ. 38.— Նախանձախնդիր ըլլալ միութեան ծաւալումին ու բարգաւաճման:

Յօդ. 39.— Կազմել զեկուցումներ մասնաճիւղի ընդհանուր ժողովին համար:

Յօդ. 40.— Գոհացնել աշխատիլ մասնաճիւղի անդամներուն գիտական և մանկավարժական պահանջները:

Յօդ. 41.— Վարչութեան անդամները վերընտրելի են:

ՄԱՍՆԱՃԻԼՂԻ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՆԵՐ

Յօդ. 42.— Իւրաքանչիւր մասնաճիւղ պարտաւոր է առնուազն երկու ամիսը անգամ մը ընդհ. ժողով գումարել:

Յօդ. 43.— Ի հարկին կրնան գումարուիլ արտակարգ ընդհ. ժողովներ վարչութեան հրաւերով կամ

մասնաճիւղի անդամներու մէկ երրորդի պահանջումով:

Յօդ. 44.— Ընդհանուր ժողովը օրինական կը համարուի մասնաճիւղի անդամներու առնուազն կէսէն մէկ աւելին ներկայութեամբ:

Յօդ. 45.— Առաջին ընդհ. ժողովը տեղի չունենալու պարագային՝ երկրորդ ժողովի ներկաներուն թիւը օրինական կը համարուի, երբ անդամներու մէկ երրորդը ներկայ է:

Յօդ. 46.— Իւրաքանչիւր ընդհ. ժողով կ'ունենայ Ատենապետ մը և Ատենադպիր մը՝ որոնք վարչութեան անդամ ըլլալու չեն:

Յօդ. 47.— Ընդհանուր ժողովը կը քննէ նախկին վարչութեան բոլոր գործառնութիւններն ու հաշիւները, կ'ընտրէ նոր վարչութեան անդամները և անոր ապագայ գործունէութեան համար ուղղութիւններ կը գծէ:

Յօդ. 48.— Կեդրոնական վարչութիւնը ի հարկին իր կողմէ կը ղրկէ քննիչներ՝ մասնաճիւղերու վարչութեանց գործառնութիւնները քննելու և իրեն տեղեկացնելու համար:

Յօդ. 49.— Մասնաճիւղերու ընդհ. ժողովները կ'ընտրեն ընդհ. ուսուցչական ժողովի համար պատգամաւորներ. հոգալով անոնց ճամբու ծախքը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 50.— Ընդհանուր ուսուցչական ժողովը տեղի կ'ունենայ տարին անգամ մը, ամրան արձա-

վորդին, անհրաժեշտ եղած պարագային կրնան գումարուիլ նաև արտակարգ ընդհ. ժողովներ կեդրոնական վարչութեան հրաւերով կամ մասնաճիւղերու առնուազն մէկ երրորդին փափաքով:

Յօդ. 51.— Ընդհ. ուսուցչական ժողովը տեղի կ'ունենայ երբ նախապէս երաշխաւորուի պատգամաւորներու ամբողջական թուին առնուազն կէսէն մէկ աւելիին ներկայութիւնը:

Յօդ. 52.— Մասնաճիւղ մը իրաւունք ունի մէկ պատգամաւոր ղրկելու ընդհ. ժողովին: 8 էն աւելի անդամ ունեցող մասնաճիւղ մը իւրաքանչիւր 15ի համար մէկ պատգամաւոր ղրկելու իրաւունք ունի:

Յօդ. 53.— Ընդհ. ժողովը իր ներքին կանոնադիրը կ'ունենայ:

Յօդ. 54.— Ընդհ. ժողովն է միութեան բարձրագոյն մարմինը:

Յօդ. 55.— Ան կը քննէ. կը հաստատէ նախկին կեդրոնական վարչութեան ամբողջ գումունէութիւնը, և հաշիւներու եզրակացութիւնը թերթերով հրատարակութեան կուտայ:

Յօդ. 56.— Ընդհանուր ժողովը կը քննէ մասնաճիւղերու վարչութեանց և իւրաքանչիւր անդամի ղրկած տեղեկութիւններն ու առաջարկները և ընթացք կուտայ անոնց:

Յօդ. 57.— Ընդհ. ժողովը կը կարգադրէ կեդր. վարչութեան և մասնաճիւղերու վարչութեանց միջեւ ծագուած անհամաձայնութիւնները:

Յօդ. 58.— Կը լսէ և վիճարանութեան կ'ենթարկէ կրթական գործը չօչափող տեսական և գործնական

հարցերու մասին բանախօսութիւններ:

Յօդ. 59.— Կրնայ ծրագիր-կանոնադրի ունէ փոփոխութիւն կատարել ներկաներու ձայնին երկու երրորդի մեծամասնութեամբ:

Յօդ. 60.— Կ'ընտրէ նոր կեդրոնական վարչութեան անդամները:

Յօդ. 61.— Կ'որոշէ յաջորդ ընդհ. ժողովին տեղը:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 62.— Միութիւնը կ'ունենայ կեդր. վարչութիւն մը ուսուցչական ընդհ. ժողովի կողմէ որոշուած քաղաքի մը մէջ: (Առայժմ Պէյրութն է կեդրոնը):

Յօդ. 63.— Վարչութիւնը կը բաղկանայ եօթը կամ ինը անդամներէ, որոնք վերընտրելի են և կը պաշտօնավարեն տարի մը՝ մէկ ընդհ. ժողովէն միւսը: Կեդր. վարչութիւնը պիտի ղեկավարէ մասնաճիւղերու գործերը:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐՆ ԵՆ

Յօդ. 64.— Ընտրել իր ատենապետը, ատենադպիրն ու գանձապահը:

Յօդ. 65.— Վարել միութեան ամբողջ գործերը, ծրագիր- կանոնադրի և ընդհ. ժողովին որոշումներուն համաձայն:

Յօդ. 66.— Կեդրոնացնել բոլոր մասնաճիւղերու գոյքերուն դրամին, աշակերտաց և ուսուցիչներու թիւին վերաբերեալ ծանօթութիւնները:

Յօդ. 67. — Ստանալ իւրաքանչիւր տարուան վերջը բոլոր մասնաճիւղերու հաշիւներն ու յաջորդ տարուան նախահաշիւները և վաւերացնել ի հարկին կատարելով փոփոխութիւններ:

Յօդ. 68. — Պատրաստել միութեան ընդհանուր գործերուն համարատուութիւնը և ներկայացնել ընդհ. ժողովին:

Յօդ. 69. — Ինչնէլ մասնաճիւղերու վարչութեանց միջեւ ծագած անհամաձայնութիւնները և տալ իր վճիռը:

Յօդ. 70. — Պատրաստել ընդհ. ժողովի օրակարգը և ժողովէն երկու ամիս առաջ զրկել զայն մասնաճիւղերուն:

Յօդ. 71. — Պաշտօնական մէն մի գրութիւն պիտի կրէ Ատենապետին և Ատենադպրին ստորագրութիւնները, դրամական գործերու վերաբերեալ գրութիւնները պիտի կրեն նաև գանձապահի ստորագրութիւնը:

Յօդ. 72. — Ընթացիկ գործերու համար գանձապահը կրնայ իր մօտ պահել առ առաւելն 10 Ս. Ոսկի. մնացածը պահ տալով վարչութեան կողմէ որոշուած դրամատուն մը՝ արժէթուղթի վերածուած:

Յօդ. 73. — Վարչութեան անդամները հաւաքաբար պտտասխանատու են ընդհ. ժողովին՝ միութեան բոլոր գոյքերուն ու դրամներուն համար:

ՄԻՈՒԹԵԱՆ ԵԿԱՄՈՒՏԻ ԱՂԲԻՒՐՆԵՐՆ ԵՆ

Յօդ. 74. — Իւրաքանչիւր անդամակցողի մօտ քի դրամը, նուազագոյն 100 շրշ. Սիւրիական:

Յօդ. 75. — Իւրաքանչիւր անդամի ամսավճարըն է 25 Ս. Դ. (12 ամիս):

Յօդ. 76. — Նուիրատուութիւններու, թատերական ներկայացումներու, երեկոյթներու, վիճակահանութիւններու, դասախօսութիւններու և ինչ, հասոյթներ:

Ծանօթ. — Միութեան ընդհ. եկամուտներուն 100-ին 50ը առայժմ իրր. պահեստի դրամ անձեռնմխելի կը մնայ, պահեստի դրամը ուէ ատեն և ուէ պատճառով չի կրնար ծախսուիլ առանց ընդհ. ժողովի երկու երրորդի մեծամասնութեան հաւանութեան:

Կ Ն Ի Ք

Յօդ. 77. — Միութիւնը կ'ունենայ իր կնիքը «Հայ Ուսուցչական Միութիւն Լիբանանի» (1930) մակագրութեամբ Հայերէն, Ֆրանսերէն, Արաբերէն:

Յօդ. 78. — Մասնաճիւղերը կ'ունենան նոյնպէս իրենց կնիքը:

Յօդ. 79. — Միութիւնը առայժմ ընթացիկ ծախքերու համար պիտի գործածէ իր հասոյթներուն հարիւրին 25ը և կարօտ ուսուցիչներու համար հարիւրին 25ը: Միութեան պահեստի դրամադուլսը 200 Ս. Ոսկիի բարձրանալէն վերջ պիտի ըլլայ հետեւեալ ձեւով, հարիւրին 40 ընթացիկ ծախքերու համար, հարիւրին 25 կարօտ ուսուցիչներու, իսկ մնացեալը պիտի ըլլայ պահեստի դրամադուլս:

ՄԻՈՒԹԵԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Յօդ. 80.— Մասնաճիւղերը կը լուծուին երբ անդամներու թիւը 5էն պակաս է, իսկ կեդրոնը կը լուծուի երբ կեդրոնի ընդհ. անդամներու թիւը 20էն պակաս է:

Յօդ. 82.— Լուծուած մասնաճիւղի մը բոլոր գոյքերը կը յանձնուին կեդր. վարչութեան:

Յօդ. 82.— Լիբանանի ընդհ. միութիւնը լուծուելու պարագային գոյքերը և ին. կը յանձնուին Լիբանանի հայ վարժարաններու, առանց յարանուանական խտրութեան, եթէ յարանուանութիւնները պաշտօնապէս ճանչնան միութիւնը: Իսկ պահեստի դրամաքլիսով երկրորդական վարժարաններ կը շրկուին ընդունակ աշակերտներ:

(Վ Ե Ր Զ)

ՄԱՍԻՆՈՒՄ

Մաս 21. — Բանասիրությունը, ինչպես նաև
այնպիսի մեծ գիտնական է, իսկ հիշյալը —
այնպիսի մեծ գիտնական ընդհանուր թիվը 2013

Մաս 22. — Բանասիրությունը, ինչպես նաև
այնպիսի մեծ գիտնական է, իսկ հիշյալը —

Մաս 23. — Բանասիրությունը, ինչպես նաև
այնպիսի մեծ գիտնական է, իսկ հիշյալը —
այնպիսի մեծ գիտնական է, իսկ հիշյալը —
այնպիսի մեծ գիտնական է, իսկ հիշյալը —
այնպիսի մեծ գիտնական է, իսկ հիշյալը —
այնպիսի մեծ գիտնական է, իսկ հիշյալը —
այնպիսի մեծ գիտնական է, իսկ հիշյալը —
այնպիսի մեծ գիտնական է, իսկ հիշյալը —
այնպիսի մեծ գիտնական է, իսկ հիշյալը —

(2013)



ՀՀ Ազգային գրադարան



NL0216288

47. 201